Լևոն Խեչոյան

Զանգը

Տաք, հորդառատ անձրեւ էր գալիս: Մեր գյուղում նման անձրեւ երբեք դեռ չէր եկել: Սարերում ձյունը միանգամից հալվեց, ու գյուղի միջով անցնող գետը ակնթարթորեն լցվեց գյուղի փողոցները: Բոլորը վախեցած կտուրներն էին բարձրացել ու տագնապով նայում էին դպրոցի զուգարանի կտուրը բարձրացած ռուսաց լեզվի ուսուցչուհուն: Նայում էինք ու մտածում, որ նրան կարող ենք փրկել: Երբ դեղին հեղեղը լցվեց տներն ու այնտեղից իր հետ դուրս բերեց նորածին գառներ, տախտակներ, արկղի մեջ նստած ձու ածող հավեր, մեզանից ամեն մեկը դարձյալ մտածում էր, որ լողալով կարելի է մոտենալ դպրոցի զուգարանին ու փրկել ռուսաց լեզվի ուսուցչուհուն: Նա բարձրա կրունկ կոշիկները բռնել էր ձեռքերում ու կանգնել էր տաք անձրեւի տակ, կարկամած, ոչ օգնություն էր կանչում, ոչ էլ լաց էր լինում:

Երբ դեղին հեղեղը լցվեց պատերազմի հերոս Հայրոյի տունը ու իր հետ տարավ նրա զույգ դնովի ոտքերը, մեզանից ամեն մեկը դարձյալ հավատացած էր, որ կարող է փրկել ռուսաց լեզվի ուսուցչուհուն: Հարկավոր է լողալը սկսել ոչ թե դեմ առ դեմ, այլ վերեւից՝ դպրոցի բակի վերին ծայրից, որ ջրի քշող հոսանքը բերեր, հաներ զուգարանի մոտ:

Նա մուգ գույնի շրթներկ էր օգտագործում, խոսելիս, խարտյաշ մազերը թեթեւ թափահարումով գցում էր հետ ու ժպտալիս այտի վրա փոսիկ էր առաջանում: Գյուղացիք ասում էին, որ Բրյուսովի անգլո-ռուսականն է վերջացրել, բայց ոչ մեկն էլ կարգին չգիտեր, թե ինչ բան է «անգլո-ռուսական» ասածը: Պարզապես մեզ համար օտար այդ բառերը հուշում էին, որ այնտեղ երկնային ոգիներին՝

երկրայինների են վերափոխում: Եվ այդ բառերը նրան համապատասխանում են ու կերպարին տալիս արծաթյա հնչեղություն:

Նրան սիրահարված տղաները կանգնեցնում էին դպրոցի ճանապարհին ու խնդրում, որ հեռագրի մի տեքստ գրի հեռուներում ապրող իրենց ընկերուհիների համար, աչքերը խոնարհած ասում էին . «Շատ է քեզ նման, ժպտալիս այտին էլ փոսիկ է առաջանում»: Նրա հորինած բանաստեղծական տեքստերը ծոցա գրպաններում տղաները բանակ էին գնում: Ութ, ինը, տասներորդ դասարանի տղաները բեղեր էին թողնում, իսկ յոթերինը՝ անդրավարտիքների արդուկը էլ քույրերին չէին վստահում: Մեխանիզատոր Սեդրակը նրան ասել էր . «Անգլիան ես շատ եմ սիրում, ինձ չե՞ս պատմի, նրանց մոտ ցորենը ի՞նչ տեխնոլոգիայով են ցանում»: Նույնիսկ, գյուղից մի քանիսն իրենց կանանց տարան Ախալքալաք, որպեսզի վարսավիրը նրանց մազերը կտրի Նվարդի մազերի նման:

Երբ մի քանի տղամարդկանց մեջքներից պարաններով կապած նստեցրին լողանալու փայտյա տաշտերի մեջ, որ փրկեն ներսում մնացած, մորթվող անասունի նման բառաչող Հայրոյին, դեղին, ուռած ալիքները մի ակնթարթում տաշտերը պատեպատ խփելով, ջարդուփշուր արեցին: Մեզանից ամեն մեկը դարձյալ հավատացած էր, որ կարելի է մոտենալ դպրոցի զուգարանին, միայն թե հարկավոր է ոչ թե հոսանքին համընթաց լողալ, այլ՝ ջրապտույտի մեջ չընկնելու համար, հակառակ: Այդպես անելու դեպքում կարող էինք լողալով տեղ հասնել ու փրկել Նվարդին:

Ոռնացող Հայրոն ներսում խեղդվում էր, տղամարդիկ տանիքը քանդեցին ու նրա ոտատ, մսագունդ մարմինը պարանով քաշեցին դուրս:

Գետը վարարում ու վարարում էր, իր հետ թոչնի բներ, ծառի չոր ճյուղեր էր բերում ու ցանում կամարակապ կամուրջը: Երբ մի ակնթարթում կամուրջը պոկվեց ու ալիքների վրա ոստոստալով անհետացավ, մեզանից ամեն մեկը հավատացած էր, որ ինքը կարող է լողալով հասնել զուգարանին, ձնհալ սառը ջրում փայտանալու դեպքում՝ ասեղով ծակոտելով ոտքերը:

Հետո սրընթաց գետն իր հետ հսկա արմատախիլ ծառ էր բերում: Ծառն արագընթաց հոսանքից դուրս պոկվեց, մտավ դպրոցի բակը ու դանդաղ իջնում

էր ներքեւ: Դա, մի ակնթարթում, բոլոր հավաքվածներն էլ միաժամանակ նկատեցին: Ու մեզանից ամեն մեկը հավատացած էր, որ լողալուն ծառը չի խանգարի, նրան հանդիպելու դեպքում կարելի է սուզվել, հետո դաշտային ծաղիկների բուրմունք ունեցող, օծանելիք բուրող Նվարդին առնել թեւերի մեջ ու տաք եւ հորդառատ անձրեւի տակ, դեղին ալիքների վրա մեջքալող տալով հասցնել կտուրներին:

Ծառը՝ հաստ բնով՝ հպանցիկ առավ դպրոցի պատշգամբի փայտյա սյուներին, քիվի հետ պոկվեց եկեղեցու զանգակատնից բերված դպրոցի զանգը ու սուզվեց ջրի տակ: Հարվածից ծառը ուղղությունը փոխեց եւ շարժվում էր դանդաղ, պտույտ-պտույտ տալով: Նվարդն ինքն էլ նկատեց: Նստեց, պատից կախ ոտքերն արդեն դեղին ջրերին էին հասնում: Բոբիկ ոտքերին հագավ կոշիկները, նորից հանեց, սկսեց գուլպաները հագնել ու նոր՝ կոշիկները: Հավաքվածներից ինչ-որ մեկն ասաց . «Դա իմաստ ունե՞ր որ…»: Հետո չէինք կարողանում հիշել, այդպես ինչ-որ մեկը բարձրաձայն էր ասել, թե՞ մեզանից ամեն մեկն էր մտքի մեջ գոռացել: Երբ նա մյուս գուլպան ու կոշիկն էլ հագավ, բոլորն էլ հասկացան, որ Նվարդն ինչքան շատ է ապրելուն հավատում եւ թե ինչո՞ւ չի լացում ու օգնություն կանչում:

Հավաքվածներից ինչ-որ մեկն ասաց . «…Գուլպաներն իմաստ ունեի՞ն որ…»: Հետո չէինք կարողանում հիշել, բարձրաձայն էր ասվել, թե՞ մենք էինք մեր մտքերի մեջ ասել ու հենց այդ պահից հավաքվածներիցս ամեն մեկն այլեւս չէր հավատում, որ ինքը կարող է լողալով հասնել Նվարդին ու նրան փրկել: Ծառը, ինչպես լուցկու տուփ, թոցրեց զուգարանը:

Զրասույզ Նվարդը չերեւաց դեղին ջրերի վրա, չերեւաց եւ ոչ մի ակնթարթ: Հավաքված տղամարդիկ նախանձով ու ատելությամբ էին նայում պատերազմում ոտքերը կորցրած Հայրոյին:

Ու տաք ու հորդառատ անձրեւը չէր դադարում:

Չորս օր հետո ջրերը քաշվեցին: Նրա դին ու զանգակատան զան զը գտան մարգագետնում, գյուղից շատ հեռու տիղմով ու ջրիմուռներով ծածկված: Նրա մայրաքաղաքաբնակ վշտաբեկ ծնողները եկան ու դագաղը շքեղ մեքենայով

տարան Երեւան:

Զանգը մաքրեցին տիղմից ու նրա կորցրած հնչեղությունը հետ եկավ: Նորից կախեցին վերանորոգված քիվից եւ այն տղամարդիկ, որոնք գիշերվա կեսին վեր էին թռչում քնից, միաբերան հայտարարում էին, որ ինչ-որ մեկը այդ պահին խփում է զանգը: Չլսողները, մինչեւ գիշերվա կեսը արթուն մնացին ու նրանք էլ լսեցին զանգի ղողանջը եւ գյուղի վրա սավառնող, խոշոր թափահարվող թեւերի ալեբախությունը, որից զրնգում էին ապակիները եւ կարճվող գիշերվա մեջ դարձյալ ու դարձյալ լսվում էր հեռացող թեւաբախությունը: